ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության և Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակի միջև արտաքին առևտրին վերաբերող վիճակագրական տվյալների փոխանակման մասին

Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), մի կողմից, և Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակը, (այսուհետ՝ Եվրոստատ), մյուս կողմից,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 1996 թվականին ստորագրված Գործընկերության և Համագործակցության Համաձայնագիրը (ԳՀՀ) և, մասնավորապես, վերջինիս վիճակագրության բնագավառում համագործակցությանը վերաբերող գլուխը,

հաշվի առնելով, որ ԳՀՀ համատեքստում, համագործակցությունը վիճակագրության բնագավառում պետք է ուղղված լինի արդյունավետ վիճակագրական համակարգերի հետագա զարգացմանը, վիճակագրական տվյալների տեղեկատվական և ծրագրային տեխնոլոգիական համատեղելիությանը, արժանահավատ վիճակագրության ժամանակին տրամադրմանը, Կողմերի միջև տնտեսական համագործակցությանը և մոնիտորինգ անցկացնելուն, ինչպես նաև Հայաստանում տնտեսական բարեփոխման գործընթացին աջակցելուն և Հայաստանում մասնավոր ձեռնարկությունների զարգացմանը նպաստելուն,

հաշվի առնելով, այս նպատակով, միջազգային և, մասնավորապես, համայնքի մեթոդներին, ստանդարտներին և դասակարգումներին համապատասխանեցման անհրաժեշտությունը և վիճակագրական տեղեկության համապատասխան փոխանակման կազմակերպման անհրաժեշտությունը՝ տվյալների բազաներ կառուցելու և/կամ օգտագործելու միջոցով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Գործունեության ոլորտը

Կողմերը սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան կհամագործակցեն արտաքին առևտրին

վերաբերող վիճակագրական տեղեկությունների փոխանակման բնագավառում:

Հոդված 2
Նպատակները

Սույն Համաձայնագրում ընդգրկված վիճակագրական տվյալների փոխանակման նպատակներն են.

- տրամադրել անհրաժեշտ տեղեկատվական աջակցություն Նախարարությանը՝ նպատակ ունենալով օգնելով ստեղծելու պայմաններ և տրամադրել անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվություն ԳՀՀ իրականացման համար,
- տրամադրել Եվրոպական հաստատություններին և անդամ պետությունների կառավարություններին այնպիսի տեղեկատվություն, որը պահանջվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև տնտեսական հարաբերությունների ձևավորման, մոնիտորինգի անցկացման և գնահատման համար, և մատչելի դարձնել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վիճակագրությունը լայն հասարակայնությանը, գործարար և այլ տնտեսական ու սոցիալական շրջանակներին՝ Եվրոպական միության շրջանակում:

Հոդված 3
Վիճակագրական տվյալներ

Սույն Համաձայնագրում նշված վիճակագրական տվյալները պարունակում են արտաքին առևտրի վերաբերյալ մանրամասն տվյալներ՝ ըստ սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող 1-ին Հավելվածում նշված ձևի:

Հոդված 4
Ռեսուրսները

Սույն Համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները կստացվեն համատեղ վիճակագրական համագործակցության ծրագրից, որը հաստատվել է Նախարարության և Եվրոստատի միջև՝ «TACIS» ծրագրի շրջանակում:

Հոդված 5
Ընթացակարգերը

Եվրոստատը և Նախարարությունը միմյանց միջև կփոխանակեն անվճար հրատարակություններ և տվյալներ, որոնք վերաբերում են 1-ին հավելվածում նշված արտաքին առևտրի տվյալների ցանկին:

Տվյալների փոխանակումը կիրականացվի եռամսյակը մեկ՝ համապատասխան համակարգչային աջակցության միջոցով:

Կողմերի միջև փոխանակված տվյալներն առաջին հերթին պետք է օգտագործվեն իրենց ներպետական նպատակների համար: Հիշյալ տվյալների ցանկացած լրացուցիչ ներառումը հրատարակություններում, նախատեսված արտաքին տարածման համար, կպահանջեն երկու Կողմերի նախօրոք և հստակ համաձայնությունը և համապատասխան մեջբերում հրատարակության տեքստում:

Հոդված 6
Որոշումների ընդունումը

Կողմերի միջև գործնական աշխատանքային կապերը կիրականացվեն նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների միջև: Սույն Համաձայնագիրն իրականացնելու և մոնիտորինգ անցկացնելու համար որոշումները կընդունվեն, որքանով որ դա հնարավոր է, երկու Կողմերից նշանակված ներկայացուցիչների կողմից:

Սույն Համաձայնագրի իրականացման և մեկնաբանման հետ կապված տարաձայնությունները կկարգավորվեն Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով:

Անհրաժեշտության դեպքում որոշումները կընդունվեն Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի և Եվրոստատի գլխավոր տնօրենի մակարդակներով:

Հոդված 7
Վերանայումը

Փոխադարձ համաձայնությամբ Կողմերը կարող են փոփոխություններ և լրացումներ մտցնել սույն Համաձայնագրի մեջ առանձին արձանագրություններով, որոնք կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Այդ արձանագրությունը ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում նախատեսված կարգով:

Հոդված 8
Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ, Կողմերի համար պարտադիր ընթացակարգերի ավարտի մասին միմյանց ծանուցման օրվանից:

Հոդված 9
Գործողության ժամկետը

Սույն Համաձայնագիրը գործում է 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից մեկը ընթացիկ ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս առաջ չծանուցի մյուսին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի փետրվարի 23-ին, Լյուքսեմբուրգ քաղաքում 1999 թվականի մարտի 9-ին, երկու օրինակով՝ հայերեն և անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Արտաքին առևտրի վերաբերյալ տվյալների ներկայացման համար օգտագործվելիք ֆորմատը հետևյալն է.

ներկայացման համար սովորական միջոցը մագնիսական ժապավենն է կամ ինտերնետ ցանցի էլեկտրոնային փոստը: Սովորական ֆորմատի ֆայլը սահմանափակված չէ: Օգտագործվելու է ASCII սիմվոլների հավաքածուն: Բացի ստորև նշված տեղեկությունից, անհրաժեշտ է (տվյալների պատշաճ մեկնաբանության համար) մեզ տրամադրել տեղեկություն՝ օգտագործվող մեթոդաբանության, գաղտնիության այն մեթոդների և կանոնների վերաբերյալ, որոնք օգտագործվում են Ձեր կողմից:

Յուրաքանչյուր գրանցում պետք է ընդգրկի հետևյալ դաշտերը.

Լեսպոնդենտի կոդը	Միշտ ISO կոդը
Հոսքը	I - ներմուծման համար, E - արտահանման համար, R - վերաարտահանման համար
Տարին	Օրինակ, 1996թ.

Ժամանակահատվածը	1(հունվարի) - 12 (դեկտեմբերի)՝ ամիսների համար 31 (I եռամսյակ) – 34 (IV եռամսյակ)՝ եռամսյակների համար
Ծագման երկիրը	Այս դաշտն օգտագործվում է միայն ներմուծման և վերաարտահանման համար և մատնանշում է արտադրության (ծագման) երկիրը: Ծագման երկիրը պետք է կոդավորվի՝ օգտագործվելով կոդավորումը: Եթե օգտագործվում է այլ կոդավորում, խնդրվում է տրամադրել Ձեր կոդավորումից ISO-ին անցնելու ֆայլը: Այս դաշտն օգտագործվում է միայն ներմուծման, վերաարտահանման համար և մատնանշում է արտադրության (ծագման) երկիրը (ստորև տես՝ 1-ին և 12-րդ օրինակները):
Նշանակման երկիրը	Այս դաշտն օգտագործվում է միայն արտահանման և վերաարտահանման համար: Նշանակման երկիրը պետք է կոդավորվի՝ օգտագործելով ISO կոդավորումը: Եթե օգտագործվում է այլ կոդավորում, խնդրվում է տրամադրել Ձեր կոդավորումից ISO-ին անցնելու ֆայլը: (Ստորև տես 1-ին և 2-րդ օրինակները):
Ապրանքի կոդը	Ապրանքի ազգային կոդը վերցված է Ապրանքի նկարագրման և կոդավորման հարմոնիզացված համակարգից (ՀՀ): Շատ երկրներ օգտագործում են Համակցված անվանացանկի (ՀԱ) կոդավորում, որը ՀՀ-ի ընդլայնումն է:
ԾԱՎԱԼԸ	Առևտրի ծավալը ԱՄՆ դոլարով կամ եվրոյով (խնդրվում է նշել Ձեր ընտրությունը ուղեկից նամակում):
Առաջին քանակական թիվը	Առաջին և երկրորդ քանակական թվեր. այս երկու դաշտերը ցույց են տալիս ներմուծված, արտահանված կամ վերաարտահանված ապրանքների քանակությունը, սովորաբար օգտագործվում է միայն մեկ քանակական թիվ, սակայն, որոշ դեպքերում՝ երկուսը: Եթե առկա

Առաջին քանակական միավորը	են միջազգային առաջարկություններ: Տես 3-րդ օրինակ, ստորև:
Երկրորդ քանակական թիվը	Այս դաշտը ցույց՝ տալիս այն միավորը, որով արտահայտված է առաջին քանակական թիվը: Այստեղ նախընտրելի է օգտագործել ISO կոդավորումը (կգ, լիտր և այլն): Եթե օգտագործվում է ազգային կոդավորումը, խնդրվում է տրամադրել ֆայլ բացատրություններով: Տես 3-րդ օրինակը, ստորև:
Երկրորդ քանակական միավորը	Եթե առկա է այս դաշտը, այն ցույց է տալիս ներմուծվող, արտահանվող և վերաատահանվող ապրանքների քանակությունը՝ արտահայտված երկրորդ քանակական միավորով, սովորաբար օգտագործվում է միայն մեկ քանակական թիվ, սակայն որոշ դեպքերում՝ երկուսը: Դա միշտ լուծվում է ազգային մակարդակով, անգամ, եթե առկա են միջազգային առաջարկություններ: (Ստորև՝ տես 3-րդ օրինակը):
	Եթե առկա է երկրորդ քանակական թիվը, այս դաշտը ցույց է տալիս այն միավորը, որով արտահայտված է երկրորդ քանակական թիվը: Այստեղ նախընտրելի է օգտագործել ISO կոդավորումը (կգ, լիտր և այլն): Եթե օգտագործվում է ազգային կոդավորում, խնդրվում է տրամադրել ֆայլ բացատրություններով: (Ստորև՝ տես 3-րդ օրինակը):

<u>Օրինակներ</u>

?? Օրինակ 1

Հոսք = R (վերաարտահանում)

- Ծագման երկիր = FI
- Նշանակման երկիր = DE

Նշանակում է ֆիննական ծագում ունեցող ապրանքների վերաարտահանում Գերմանիա:

?? Օրինակ 2

- Հոսք =E (արտահանում)
- Ծագման երկիր = (դատարկ դաշտը նշանակում է, որ ապրանքի ծագման երկիրը ձերն է)
- Նշանակման երկիր = DE

Նշանակում է ապրանքի սովորական արտահանում ձեր երկրից Գերմանիա:

?? Օրինակ 3. քանակություն ԵՄ առևտրում՝

- «Կարտոֆիլի» համար օգտագործվում է միայն առաջին քանակական թիվը՝ կգ,
- «Կենդանի կենդանիների» համար առաջին քանակական միավորը կգ է, և երկրորդ քանակական միավորը՝ կետերի թիվը,
- «Գինիների» և այլ ալկոհոլային խմիչքների համար առաջին քանակական միավորը կգ է, և երկրորդ քանակական միավորը՝ լիտր: Սակայն, «Ոգելից ալկոհոլային խմիչքների» համար երկրորդ քանակական միավորը լիտր է՝ զուտ (100%) ալկոհոլով

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 10-ից: